

ՆՈՒՒՐՈՒՄ

«Եւ հերով իւրով մաքրէր զոտս նորա, և տունն լի եղեւ ի հոտոյ իւրոյն»

Ո՛վ կիսաբաց թողուց վայրկեան մը դուռն անոր
Խորհրդաքօղ ու երկնաւէտ ջինջ հոգիին
Որպէսզի բնաւ չըփշրուէր այն հայելին
Որ ցոյց կու տայ պատկերին հրաշքը լուսաւոր

Գուցէ ո՛չ մէկ սիրուած էակ արքշիւ անքան
Իր սրտին զարկն աստղերուն հետ պիտի չափէր
Ո՛չ մէկ խոստում ծոցը կընոջ այդ իւղաբեր
Պիտի յուզէր երբ հեշտածո՛ր է լուսնկան

Ձի մահաբոյր էր ընծայումն այդ խնկաւէտ
Ուր լուած էր մարմիններուն կերքը վարդեր
Տըւած էին իւղին կըշիւքը լոյսին հետ

Գլուխը բեռովն էր ոսկիին ոտքերուն յեց
Ու բաց դռնէն անոր հոգւոյն երբ կը դիտէր
Սէրը ինքզինքը մերկ տեսաւ ու արտասուեց՝

ԱՐՄԵՆ ԵՐԱՅԹ

ԳԱՐՈՒՆՍ

Անանուն ձայներ երգեցին սրտիս
Աւետի՛ս գարնան.

Ու կարմիր վարդեր տարփոտ հոգիիս
Ձոհերը եղան...

Ամէն գարնան մէջ սըրինգ ու ծաղիկ
Ինձ համբոյր տւին.

Խորասուզուելով սըրտիս մէջ յուշիկ
Նոր այգի բացին...

Ծով դաշտերուն մէջ մանուկ օրերուս,
Արքշիւ էր հոգիս.

Լիւաներն հագած բեհեզ և սնդուս
Կախարդեցին զիս:

Ո՛վ կը կարծէր թէ օր մ'ես կը զարթնում
Այդ երազներէն,

Ու ես կ'ունենամ հըզօր ըզգացում...
Դառնացած կեանքէն...

Ա՛խ գացին անոնք... ու դարձեալ կու գան
Լոյսով կենարար...

Ձըկայ նոր գարունն այլեւս ինձ համար...
Ո՛չ կեանք, ոչ աշխարհ:

Բ. Պ.

ԻՍ ՎԱՂԱՍԵՌԻԿ ՀՈԳԵԿԻՑ

Հ. ՊՕՂՈՍ ՔԻԼԻԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Կիսով սրտիս ա՛ռ ըզբընար քո աբխուր
Ե՛րթ մանկութիւն յամանակին անեւ կուր»:
Ալիշան

Իրիկուն: Վերջապոյ ծիրանի:
Լոռի երկիրը, ոսկեղէն հոլանի
Մենաւոր այս ափին անընկեր
Թախիծով իմ հոգին են ներկեր:

Կըռուկներ երկրորդ կապտաշուն
Հեռացան տարւատար՝ անխօսուն:
— Ի՛մ նըշի, լոկ անոշ յիշատակ
Պանդրիտին, ա՛խ վըշտիս ե՛ս գիտակ...

Այն գիշեր կարօտով ննջեցի,
Հեռակայ իմ եղբայր սիրելի.
Եւ անխօս եւ մենիկ այն գիշեր
Հեռացար անծանօթ աշխարհներ:

Վաղորդայնն էր մըռայ եւ տըխուր:
— Ի՛մ նըշի, ծովափին դու բափո՛ւր.
Ա՛խ պատմե՛ ինձ, քե՛ նըր մերկացար
Խնկահոտ բաժակներդ պայծառ: —

— Քոս պանդուխտ սիրելին գողացան
Լոռեղէն հոգիներ անընթան.
Անընթան սիրելոյդ եւ հիւսեր
Պատմուման՝ իմ ամբիծ քերթիկներ: —

Իրիկուն. վերջապոյ ծիրանի,
Ուր արեւն իմ սիրոյս կը մեռնի.
Երգեցէք դուք լալիան աշիքներ
Իմ հոգոյս բախժոտ երգն ու աշեր:

Իմ գարունն վառ սրտի նոր ծաղիկ
Իմ սիրոյ յոյգերուն անդրանիկ,
Ու կ'երթաս դու լըսին քոս մարմին
Ու քեզ հետ մեր սրտերը ամեն:

Քոս կարօտ, քոս մորմնը կոյս սրտին
Ըղձակաբ գարուններ չըրացին
Այս վարդերը տփոյն ու բարշաւ,
Այս սիրերն անծանօթ ու տարտամ:

Իմ երգերը ծաղիկ խնկարոյր
Իմ աղօթքն արտասուք և համբոյր
Քեզ քեզն ու քոսն առ յաշտ,
Վաղամեա իմ եղբայր անձկաշտ:

Հեռակայ խնկելի քոս շիրմին
Եւ յաշտ ու յատաւոր կարողին,
Հին սիրոյ իմ բախժիկը գեղուն
Ամեն այգ քոս շիրմին պիտ' հեղուն:

Կըռուկներ, բարձրաբիւ երկրորդ
Հեռացէք անխօսուն ու խըռով.
Եւ մենիկ կը հըսկեմ այս ափին
Ու նժդեհ իմ անոշ նըշենին:

Վեճեցի, 1 Ապրիլ 1933

Հ. ԵՂԻԱ ՓԵՉԻԿԵԱՆ